մէկը—եան է գրում, միւսը—եանց, այլ որ մի և նոյն անձը առաջին տողում—եան է, երկրորդում—եանց, մէկ ուրիշ տեղ—օվ. մինչև անգամ մէկ տեղ՝ Յոհանեանց, միւս տեղ՝ Օհանեանց, ուրիշ տեղ՝ Ահանեան, մէկ ուրիշ տեղ էլ Ահանով: Իսկ այդ —եանց ռուսերէն մէկը գրում է՝—іанцъ, միւսը՝—ьянцъ, ուրիշը—янцъ. Մեր ուսումնականներից անգամ մէկը գրում է՝ Պատկանեան—Патканов, միւսը՝ Մսերեանց—Мсеріанцъ—Missèrian, ուրիշը, Մելքիսեդեկեան—Меликсетовъ, մէկ ուրիշն էլ՝ Երեցփոխեանց—Ирицпуховъ. բայց ոչ մէկ ռուս, ի հարկէ, այսօր կամ մէկ լեզուով չէր գրի—овъ, վաղը կամ միւս լեզուով—инъ, յետոյ—ко,—овичъ,—скій. Անփոփոխ գործածվող մենք տեսնում ենք ունի և ական մասնիկներով տոհմանունները միայն: Յայտնվեցան առանց մասնիկի—Ջէրաղ, Էմին, Շահնազար, Քալանթար—գրողներ էլ. (դէ Նափուր էլ ունենք, միթէ նա հա՞յ չէ): Եղան հին ձևերի հետևողներ—Ստեփանէ, Սիւնեաց, Աշտարակեցի գրողներ էլ:

Ոչ պակաս անկանոն ենք վարվում և անունների հետ. Գէորգը Георгій գրելու տեղ Кеворкъ, Գրիգորը Григорій գրելու տեղ՝ Крикоръ, Յակոբը Яковъ գրելու տեղ՝ Акопъ, Յովհաննէսը Иванъ գրելու տեղ՝ Оганесъ կամ Ованесъ, այլև Յարութիւնը եղած է Артемій, Առաքելը—Аркадій, Մկրտիչը—Никита, Մարտիրոսը—Мартинъ, Հայրապետը և Կարապետը—Герасимъ, նոյնը տեսնում ենք ֆրանսերէն և կամ ուրիշ լեզուով գրած ժամանակ:

Տոհմանունների և անունների այս օրինակ անկանոն գործածութիւնը, բացի անճշդութիւն լինելուց, պատճառում է գործնական կեանքում զանազան դժուարութիւններ և աւելորդ ծախսեր էլ: Օրինակ մտնում ես նամակատուն ստանալու քեզ ուղղված փող, ծրար կամ ուրիշ ապահովացրած թղթակցութիւն. կամ թէ՝ պօլիցիայում պէտք է վաւերացնել տասն մէկ թուղթ, և ահա բծախնդիր պաշտօնեան նշմարում է մէկ սխալ, մէկ տարբերութիւն տոհմանունից վերջաւորութեան կամ անունից տառադարձութեան, թարգմանութեան մէջ—մանաւանդ եթէ պատահմամբ գտնվում ես մի օտար քաղաքում—ու հարկադրում է քեզ ուղղել այդ սխալը….

Յիշված բոլոր խառնափնթորութիւնները կարգի գնելու համար վատ չէր լինի եթէ մի փոքր ուշ դարձնէինք: Հարկաւոր էր իմ կարծիքով, բոլորովին թողնել օտար մասնիկները, մանաւանդ օվ, որ ամենից շատ գործածական է, թէ հայերէն և թէ ուրիշ լեզուով գրելս: Ո՞ր անծանօթ հայը կամ այլազգին—ասացէք, խնդրեմ—կարող կը լինի իմանալ, թէ Լազարեվ, Տէլկօզինիկօվ, Բօղդանօվ, Պօպօվ, Այվազօվսկի, Իքիզլէր, Կիւլպէնկօղլու հայ են: Իսկ եան և եանց մասնիկներից պէտք է ընդհանրացնել մէկը: Ես եան նախապատիւ կը համարէի, ոչ թէ միայն այն պատճառով, որ մեր նախնիք պատմական ժամանակներում գործ են ածել, այլ որ ներկայումս էլ մեր ազգի մեծամասնութիւնը—Թիւրքիայում այդ է գործածում:

Բոլորովին սխալ կերպով շատ ռուսահպատակ հայեր կարծում են, թէ եան համապատասխանում է овичъ-ին, իսկ եանց՝ овъ—ին: Վաթսուներորդ թւականներումն էր, կարծեմ, որ «Հայկական Աշխարհը» մի յօդուած նուիրեց այս հարցին, ուր կարծվում էր, թէ եանց առաջ է եկել նրանից, որ ռուսաց տիրապետութեան տակ նոր մըտած հայերը овъ-ը յոգնակի սեռական համարելով և եան մասնիկը եանց փոխարկելով որպէս թէ յարմարեցրել են նրան: Այդ կարծիքը իր ժամանակին ի հարկէ, շատերի ծիծաղը շարժեց. ամենքը գիտեն, որ աշխարհիս զանազան ծայրերում գտնված հայ ժողովուրդը այս օրվան օրս իր զանազան բարբառներով ասում է Արամէնց Վարդանը… Աթանէսանց այգին… Անանենց տունը… Շէխունց տղան… Խոսրովենց աղջիկը:

Երևան Ց. Անազեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 8 փետրվարի

Ներկայ ժամանակիս Մերազնեաց նպաստակարօտ և ցաւալի վիճակին նայելով, ստիպվեցի յանուն «Արարատեան» ընկերութեան հանգանակութեամբ դիմաւորել իմ սեռակիցներին. Ժողովվեց 121 րուբլի։

Ահա ուղարկում եմ այդ գումարը նամակումս ներփակած նուիրատուաց անուանացուցակով հանդերձ և խնդրում եմ նուաստաբար հրատարակել «Մշակի» մէջ ի միամտութիւն մասնակցողաց. բայց ցանկալի է մեզ հասցնել այս գումարը վանի սովատանջելոց. Ահա նուիրատուների անունները. Տիկ. Եղիսաբեթ Մելիք Այվազեանց 1 ր., տ. Կատարինէ Գուլլասպեանց 2 ր., տ. Եփեմիա Վարդանեանց 3 ր., տ. Կատինկայ Վարդանեանց 2 ր., տ. Նինօ Ջանջուղազեանց 4 ր., օր. Մարիամ Յովեաննեանց 5 ր., տ. Կատարինէ Շաքարեանց 5 ր., տ. Սունդուկեանց 2 ր., օր. Նինա Գօզալեանց 3 ր., օր. Սօֆիա Պապեանց 3 ր., տ. Եղիսաբեթ Սուլխեանց 1 ր., տ. Լիզա Մելիք Այվազեանց 1 ր., տ. Թագուհի Սիլիկեանց ուտիացի 1 ր., օր. Կատարինէ Սիլիկեանց ուտիացի 1 ր., օր. Աննա Դանդուրեանց 3 ր., տ. Մելանիա Շատիրօվա (վրացի) 2 ր., հանգուցեալ տ. Ղօրղանեանցի հոգոյ համար նուիրուած գ. Տէր-Աստուրեանց 5 ր., տ. Բարբարէ Շահզինարով 3 ր., տ. Շողակաթ Կոլմանեանց 2 ր., տ. Կեկէլ Ղարաջեանց 1 ր., տ. Նատալիա Կուզանեանց 3 ր., տ. Նինոյ Լիսինեանց 3 ր., տ. Տէր-Ստեփանեանց (սալմաստցի) 1 ր., օր. Խան բալայ Իսմայելով (պարսիկ) 2 ր., տ. Սօֆիօ Նաւասարդեանց 1 ր., տ. Կատինկայ Բաղրամեանց 40 կ., օր. Կարաձելով 2 ր., տ. Հռիփսիմէ Բուքիեանց 50 կ., տ. Կեկէլ Եղիազարեանց 40 կ., տ. Կեկէլ Խալաթեանց 1 ր., տ. Շաշինկայ Էմինեանց 1 ր., օր. Հայկանուշ Տէր-Սարգսեանց 1 ր., հանգուցեալ Օլինկա Գեմուրեանցի համար նուիրեց Ստեփան Գեմուրեանց 3 ր., Մայի (Մարիամ) Թամիրազեանց 1 ր., տ. Յարութիւնեանց 1 ր., Սօֆիա Բայխօղլով 1 ր., տ. Ղ. Մանասեան Նազարեանց 3 ր., տ. Թովմասեանց (սալմաստցի 1 ր., տ. Աննա Օսեփեանց 2 ր., տ. Ջանազան Միլիօնչով 1 ր. Անյայտ ոմն 5 ր., տ. Արարատով 2 ր., օր. Հաջի Բաղր օղլի (պարսիկ) 2 ր., տ. Շուշան Մուրատեանց 2 ր., օր. Նինա Եվանգուլեանց 2 ր., տ. Անթառամ Քալանթարեանց 1 ր., տ. Տէր-Ղևոնդեանց 2 ր., օր. Մարիամ Ալէքսանեանց 3 ր., տ. Խանում Շահպազ (պարսիկ) 3 ր., Մ. Ա. Ե. Յովհաննէս Յովեաննեանց 10 ր., օր. Վառվառէ Տէր-Միքայէլեանց 3 ր., Մակա (Մարիամ) Նիկողոսեանց 5 ր. 70 կ.. Գումար 121 րուբլի։

Մակա Նիկողոսեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 8 փետրվարի

Ձեր պատուական լրագրի 19-րորդ համարում վանի նամակը ամեն մի հայի սրտի վրա մի սուր ասեղի պէս պէտք է նստէր, եթէ իսկապէս հայ անուան հետ իրանց երակների մէջ հոսում է և հայ արիւն: Աչքերիցս դառն արտասուքներ թափեցրին „հայրիկ հաց, հայրիկ հաց“ սիրտ պատառող բառերը, բայց ինձպէսները ինչ օգնութիւն կարող են հասցնել այդ թշուառներին, բացի նցանց հետ միասին ողբալուց….

Ես իմ աղքատիկ քսակից բաժին եմ հանում տասն րուբլի թշուառ վանեցիների համար, և մի քանի չքաւորներից մի փոքրիկ գումար էլ ստանալով յանձնում եմ ձեր տնօրէնութեանը: Թող „հայրիկ հաց, հայրիկ հաց“ բառերն արձագանք գտնեն ամեն մի հայի սրտում, և թող չը զլանան իրանց օժանդակութիւնը: Ահա նուիրատուների անունները.—Սահակ Դօստիեանց վանեցի 5 ր., Թովմաս Դաւթեանց ազուլեցի 3 ր., Արտէմ Մեսրոպով ներկարար Թիֆլիսեցի 1 ր.: Ընդամենը 19 ր.:

Մարտիրոս Հախնազարեանց

փարիզի մէջ դաշնագրով մը կը հաստատուէր) նորա գործադրութեան ձեռնարկեցին. այս յատակագծին գոյութիւնը հաստատուած է մի քանի դէպքերով, որք այս թուականէն զկնի տեղի ունեցան.

Զարսանճագի, Քղիի, Ճապաղջուրի, Կէնճէի, Տիգրիսի հիւսիսային, Սասունի, Խիզանի, Վան և Շատախ կազաներու լեռնաբնակաց աղաներուն, պէյերուն և չէյխերուն դէմ չարունակ բրած գանգատները ամենն ալ Հայոց վերաբերեալ հողերուն յափշտակութեան վրա կը կայանան.

Հասկնալով և հաշուելով որ Թափուն կրնար այս խոր և սոսկալի քաղաքականութեան յատակագծին յաջողութեան և քրիստոնեայ տարրին ջընջման զօրաւոր միջոց մը լինել, զայն անմիջապէս գործադրելու ձեռնարկեցին. Այն ատեն աղաները, պէյերն և չէյխերը, խօնիչէնի պատրուակաւ յաջողեցան հետզհետէ գրաւել դարերէ 'ի վեր Հայոց կալուած եղած հողերը և այս միջոցով իսկ նոքա յաջողեցան հայերը նուաճել և ջնջել.

Աւելորդ է հոս յիշել Վանայ, Էրզրումի, Խարբերդի, Տիգրիսի գաւառաց մէջ գործածուած բռնաւորական միջոցները, որոց գաղթական հայերը մերկ և սովամահ, ատեն մը Թափառելէ զկնի սպառելով ջնջուած են.

Հետևեալ օրինակը իմ յառաջադրութիւնս հաստատելու բաւական է. 1870-ին կարգը Շատախ կազային էր իւր հողային կալուածները Թափուով վաւերացնելու. տեղական վարչութիւնը օտարական քիւրդեր կը հրաւիրէ որ գան Թափուով մը նոյն իսկ, ըստ քիւրդերու չարունակ վկայութեան, դարերէ ի վեր հայոց պատկանած հողերը գնեն և գրաւեն. Այս բանս կատարուելով, դատը կը տեղափոխուի կեդրոնը (Մուշ) ուր տեղական վարչութեան Թիւրք պաշտօնատարք կը խրատեն և կը յորդորեն քիւրդերը որ խիստ աժան գնով և օրինաւոր Թափուով մը այն հողերը բռնեն. բայց այս սանցի քիւրդերը խիստ աղահ լինելով և մանաւանդ հին քրդական սովորութեամբ հողին կարեւորութիւնը չը տալով, այս առաջարկութիւնը կը մերժեն. հակառակ այս մերժման Հայք չը կարողացան մինչև ցայժմ իրենց կալուածներն վաւերացնել, այսու ամենայնիւ անընդհատ, բայց անհանգիստ սրտով, կը չարունակեն այս երկիրները մշակել.

Վերոյիշեալ Թիւրք պաշտօնատարներէն մին, որ այս ի դերև եղած յափշտակութեան աշխատած էր, մօտերս Առաքելոց վանքին վանահայր Յովհաննէս վարդապետին խոստովանած է, որ Բ. Դռնէն առնուած հրամաններ կը հրամայէին իրենց հողերը քիւրդերուն տալ և ոչ երբէք հայոց, որպէս զի Տաւրոսի վրա քիւրդերու գիծ մը հաստատուի.

Թափուին այսպէս գործադրելովը խիստ դիւրին պիտի լինէր Պէյի մը կամ Շէյխի մը և կամ Աղայի մը տիրանալ ոչ միայն շատ մը գիւղերու, այլ և ամբողջ գաւառի մը. բայց մանաւանդ որչափ դիւրութիւններ կուտան կեդրոնէ մը խիստ հեռու ատ և անդ ցրուած գիւղերու և հողերու յափշտակութեան.

Որչափ խորդութիւններ ցուցուցած են 1-ն, թէ այս ինչ գիւղը իւր բոլոր հողովը տրուած է Թափուի մը միջոցաւ մի խալամի առանց հայ կալուածատէրց գիտութեան. 2. մի գիւղ կամ մի հող զոր այս ինչ տարի հայ մը օրինաւորապէս Թափուով մը գնած էր, երկրորդ տարին նոյն իսկ կառավարութենէ մի խալամի կը տրուի. 3-ն, թէ Թիւրքերը օրինաւոր կալուածատէր եղած են նոյն հողերուն, որոց Թափուները սպառնալեօք կամ ուրիշ սոսկալի միջոցներով և նոյն իսկ սպանութեամբ գողցուած կամ գրաւուած են. ի զուր հայք կը բողոքեն, բայց Շէրին միայն խալամին վըկայութիւնը կընդունի *), թէև տէրութեան արձանագիրները կը վկայեն յանուն հայուն առաջին արձանագրութեան գոյութիւնը. բայց ինչ կարևորութիւն կրնայ ունենալ Թիւրք պաշտօնատարի մը համար այսպիսի վկայութիւն մը. 4-ն, թէ՝ նիւթապէս անկարելի լինելով ամեն տեղ հողերը խալամաց տալը, մտածեցին մի և նոյն Թափուն ձեռքէ ձեռք անցընել 4 կամ 5 անձանց, այս բանս կռիւներ և անկարգութիւններ յարոյց, որ յօգուտ խալամաց և ի փառս հայոց վերջացուցին.

Կրնամ ձեզ Թափուով այս 4 տեսակ պաշտօնական յափշտակութեանց վրա անթիւ օրինակներ յիշել, բայց գոհ կը լինեմ երկուքով, զոր բաւ կը համարեմ այստեղ գործածուած բռնաւորական և անիրաւ միջոցներուն վրա ձեզ մի գաղափար տալու համար.

Մշոյ Միւֆթին կը յաջողի Թափուով իրեն սեպհականելու Մշոյ շրջականերէն Մարնիկ գիւղը ամբողջովին. ի զուր հայք բողոքներով կաղաչեն նախ տեղական կառավարութեան և ապա պատրիարքին միջոցաւ Բ. Դրան, և վերջապէս ընդհանուր աղերսագիր մը կը մատուցանեն մեծ եպարքոս Ալի փաշայի….. Նոյնպէս փէթարի, որ Մշոյ շըրջակաները լեռներու մէջ գիւղ մէ, մանրածախ մշեցի մի Թիւրք վաճառական իւր չարունակ երթևեկութեանց մէջ Թափուի գործադրութեան միջոցին, կը համոզէ հայերը որ ի նկատի առնելով իրենց տաճկական լեզուին մէջ ունեցած տգիտութիւնը. պէտք էր Թափուի գնոյն և ծախքին համար հարկաւոր եղած ստակը իրեն յանձնել, որովհետև այն ատեն գործը իւր վրա առնլով, ուզածին պէս կրնար վերջացնել. միամիտ հայք առաջարկութիւնը կընդունին և ստակը տաճկին կը յանձնեն.

Բայց սա իրեն կը սեփականացնէ բոլոր Թափուները, այսինքն գիւղին բոլոր հողը, հայ գիւղացւոց ստակովը զայն իւր վրա դարձնելով. իսկոյն հայք կը բողոքեն. Թիւրքին անիրաւութիւնը և յափշտակութիւնը հաստատելու համար, գիւղէն վկայ մը՝ բայց խալամ մի վկայ կը խնդրվի. ուր գտնեն զայն, մինչդեռ գիւղը բոլորովին հայաբնակ է.

Որչափ այսպիսի հազարաւոր խնդիրներ և գանգատներ տեղի ունեցան և դեռ ևս կունենան, բայց և ոչ մի տեղ չիք արդարութիւն.

Կերևի թէ հայոց դէմ գործած այս անիրաւ յափշտակութիւնը բաւական չէր. հակառակ այնչափ բողոքանաց, գործադրուել սկսաւ աշարի (տասանորդ) վնասակար դրութիւնը, որ ինչպէս գիտեմք, ընդհանրապէս խալամաց ծախսելով, այս վերջինները հարստացնելու *), քրիստոնեայ ժողովուրդները հարստահարելու և թշուառացնելու դիւրին մի միջոց է. այս աշարի դրութիւնը մեծ վնաս հասուց թէ կալուածատէր և թէ մանաւանդ Մարապաճի հայոց. Այս խեղճերը ստիպուած լինելով սպասել որ շահնան (տասանորդիչ) կամ իւր գործակատարը գայ, չափէ և իւր մասն առնու, շահնան իւր շահերը կը ճանչնայ, երբեմն հունձքէն առաջ կը հասնի, և տասանորդը կորոշէ դեռ չը բուսած կամ տակաւին հազիւ ծլած պաշարաց վրա. երբեմն կերթայ և կուգայ առանց գործին զբաղելու, որպէս զի ստիպէ երկրագործը իրեն վճարել պըստելը (ընծայ) կամ անհամբեր սպասել, որովհետև եթէ երկրագործը աշնան անձրևային եղանակը նախատեսելով իւր արմտիքը մթերէ, զանոնք պաշտպանելու համար, առանց շահնանի սպասելու, սա, երբ հասնի, տասանորդի համար չափը կը կրկնապատկէ. բայց եթէ երկրագործը անգութ սպասումով մը բաց օդին թողու իւր արմտիքը, աշունը վրա հասնելով զանոնք կը թրջէ և կապականէ ի մեծ վնաս երկրագործի, վաճառականին և սպառողին. Մարապաճին աւելի կը վնասուի այս սոսկալի դրութենէն, որովհետև հնձոց կէսը երկրին կալուածատիրոջ տալու ստիպուած լինելով, սա իւր բաժինը կը վերցնէ շահնանի հասնելէն առաջ, դժբաղդ Մարապաճին կը կրէ միայնակ տասանորդին կամ տուգանքին բեռը.

Այսպէս, տասանորդի հատուցման այս կերպով երկրագործը օրինաւորապէս կայսերական գանձուն պարտական եղած տասանորդին կրկնապատիկը կը վճարէ և կաղքատանայ, և անգամ մը իւր տարեկէն զրկուելէն զկնի հայրենափոխութեան կամ գաղթականութեան կը դիմէ.

Աւելորդ է յիշել աս պարագան ևս թէ՝ այս ինչ գաւառին կամ գիւղին աշարը բազմաթիւ անձինք մէկզմէկու ծախելով, վերջին գնողը կուգար տասանորդը առնելու, սակայն շատ անգամ տեսնուած է որ, որ է իցէ պատճառաւ մը, մի նոր տասանորդիչ կառավարութեան հրամանագրով մը ներկայացած է, այնպէս որ գիւղացին պարտաւորուեր է կամ նորէն վճարելու և կամ խիստ ծանր դատ մը սկսելու, առանց հաշուելու որ շատ անգամ պէյերը յաճախ բռնութեամբ այս տասանորդը կառնեն իբր բուն կալուածատէրներ.

(Կը շարունակվի)

---

*) Մինչդեռ Սուլթանը կը հրամայէ արազիէ (հողային) դատերը Նիզամիէի դատաստանի մէջ վճռել, մի քիչ վերջ Բ. Դուռը հրաման կը ղրկէ կուսակալին զայնս առաջուան պէս Շէրիով դատել. Ստոյգ է որ մի պաշտօնական ծանուցումն եղաւ ամսէ մ'ի վեր վերստին Նիզամիէ ատեաններուն յանձնել, այս պայմանաւ որ նախագահները իսլամ լինին.

*) Այս բանիս վկայ է Էրզրումի բարենորոգման ժողովին Թուրք անդամներէն ստորագրուած և կայսերական քոմիսէրաց ներկայացուած ծրագիրը. որուն մէջ Թիւրքերը Աշարի նախկին դրութիւնը կը խնդրեն, նկատելով որ այժմու դրութիւնը իրենց շահաւէտ չէ երբէք.